

# Հ Ա Ղ Ո Ր Դ ՈՒ Մ

## Վանաձորի համայնքի 2015թվականի բյուջեի 3 ամսվա կատարման վերաբերյալ

Վանաձորի համայնքի 2015թվականի բյուջեն 3 ամսվա կտրվածքով կատարվել է.

ա) Եկամուտների գծով՝ 92,6 տոկոսով, նախատեսված 562150,0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 520579,7 հազար դրամ:

- Սեփական եկամուտները (հարկեր և տուրքեր, այլ եկամուտներ, մուտքեր հիմնական միջոցների իրացումից) նախատեսված 168508.0 հազար դրամի դիմաց փաստացի կազմել են 172325.0 հազար դրամ կամ բյուջեն սեփական եկամուտների գծով կատարվել է 102.3 տոկոսով:
- Տեղական ինքնակառավարման մարմիններին պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար ստացվող միջոցները նախատեսված 12572.3 հազար դրամի դիմաց փաստացի կազմել են 10778.3 հազար դրամ կամ կատարվել է 85.7 տոկոսով:
- Պաշտոնական դրամաշնորհների գծով եկամուտները նախատեսված 378999.7 հազար դրամի դիմաց կազմել են 317518.4 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 83.8 տոկոս, որից

*316315.7 հազար դրամը նախատեսված է դոտացիայի գծով, փաստացի մուտքը կազմել է 316315.7 հազար դրամ կամ կատարվել է 100 տոկոսով:*

*58204.0 հազար դրամը նախատեսված է այլ դոտացիայի գծով, փաստացի մուտք չկա:*

*4480.0 հազար դրամը նախատեսված է սուբվենցիայի գծով, փաստացի մուտքը կազմել է 1202.7 հազար դրամ (նպատակաուղղված է երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, փողային և լարային նվագարանների գծով ուսուցման համար) կամ կատարվել է 26.8 տոկոսով:*

- Տարեկազմի ազատ մնացորդը կազմել է 19958.0 հազար դրամ:

բ) Ծախսերի գծով՝ կատարվել է 90.4 տոկոսով, նախատեսված 562150.0 հազար դրամի դիմաց դրամարկղային ծախսերը կազմել են 507979.9 հազար դրամ:

### 1. Վարչական բյուջեի եկամուտներ

Վարչական բյուջեի եկամուտները 3 ամսվա համար նախատեսված 548060.0 հազար դրամի դիմաց կազմել են 506263.1 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 92.4 տոկոս:

-Վարչական մասի եկամուտներից սեփական եկամուտները (հարկեր և տուրքեր, այլ եկամուտներ) նախատեսված 156488.0 հազար դրամի դիմաց փաստացի կազմել են 158473.5 հազար դրամ կամ կատարվել են 101.3 տոկոսով:

-ՏԻՄ-ին պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար ստացվող միջոցները նախատեսված 12572.3 հազար դրամի դիմաց փաստացի կազմել են 10778.3 հազար դրամ կամ կատարվել է 85.7 տոկոսով:

-Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհների գծով եկամուտները նախատեսված 378999.7 հազար դրամի դիմաց փաստացի կազմել են 317518.4 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 83.8 տոկոս, որից 316315.7 հազար դրամը կազմում է դոտացիան և 1202.7 հազար դրամը՝ սուբվենցիան :

-Վարչական բյուջեի տարեսկզբի մնացորդը կազմել է 19492.9 հազար դրամ:

#### **1.1 Հողի հարկ**

Հողի հարկի գծով եկամուտները 3 ամսվա համար նախատեսված 9425.0 հազար դրամի դիմաց փաստացի կազմել են 6874.8 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 72.9 տոկոս: Նախորդ տարվա համեմատությամբ աճել է 562.6 հազար դրամով:

#### **1.2 Գույքահարկ**

Գույքահարկի գծով եկամուտները 3 ամսվա համար նախատեսված 72500.0 հազար դրամի դիմաց փաստացի կազմել են 82394.9 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 113.6 տոկոս: Նախորդ տարվա համեմատությամբ աճել է 3223.6 հազար դրամով:

#### **1.3 Պետական տուրքեր**

Պետական տուրքերի գծով եկամուտները 3 ամսվա համար նախատեսված 6250.0 հազար դրամի դիմաց փաստացի կազմել են 5105.8 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 81.7 տոկոս: Նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 1667.5 հազար դրամով:

#### **1.4 Տեղական տուրքեր**

Տեղական տուրքերի գծով եկամուտները 3 ամսվա համար նախատեսված 15775.0 հազար դրամի դիմաց փաստացի կազմել են 17230.3 հազար դրամ կամ տեղական տուրքերի գծով բյուջեն կատարվել է 109.2 տոկոսով: Նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 1374.9 հազար դրամով:

#### **1.5 Ոչ հարկային եկամուտներ**

Այլ եկամուտները նախատեսված 52538.0 հազար դրամի դիմաց փաստացի կազմել են 46867.7 հազար դրամ կամ կատարվել են 89.2 տոկոսով: Նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 3833.2 հազար դրամով:

#### **1.6 Պատվիրակված լիազորություններ**

Պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար ստացվող միջոցները նախատեսված 12572.3 հազար դրամի դիմաց փաստացի կազմել են 10778.3 հազար դրամ կամ կատարվել է 85.7 տոկոսով: Նախորդ տարվա համեմատությամբ աճել է 4920.6 հազար դրամով:

#### **1.7 Ընթացիկ պաշտոնական դրամաշնորհներ**

Ընթացիկ պաշտոնական դրամաշնորհները նախատեսված 378999.7 հազար դրամի դիմաց փաստացի կազմել են 317518.4 հազար դրամ կամ կատարվել են 83.8 տոկոսով: Նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 28830.7 հազար դրամով:

այդ թվում՝

*316315.7 հազար դրամը նախատեսված է դոտացիայի գծով, փաստացի մուտքը կազմել է 316315.7 հազար դրամ կամ կատարվել է 100 տոկոսով:*

*58204.0 հազար դրամը նախատեսված է այլ դոտացիայի գծով, փաստացի մուտք չկա:*

4480.0 հազար դրամը նախատեսված է սուբվենցիայի գծով, փաստացի մուտքը կազմել է 1202.7 հազար դրամ (նպատակաուղղված է երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, փողային և լարային նվագարանների գծով ուսուցման համար) կամ կատարվել է 26.8 տոկոսով:

### 1.8 Տարեսկզբի մնացորդը

Վարչական բյուջեի տարեսկզբի մնացորդը կազմում է 19492.9 հազար դրամ:

### 2. Ֆոնդային բյուջեի եկամուտներ

Ֆոնդային բյուջեի եկամուտները 3 ամսվա համար նախատեսված 14090.0 հազար դրամի դիմաց փաստացի կազմել են 14316.6 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 101.6 տոկոս:

- Հողի իրացումից մուտքերը նախատեսված 8600.0 հազար դրամի դիմաց փաստացի կազմել են 11012.5 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 128.1 տոկոս: Նախորդ տարվա համեմատությամբ աճել է 2446.1 հազար դրամով:
- Այլ հիմնական միջոցների իրացումից մուտքերը նախատեսված 3420.0 հազար դրամի դիմաց փաստացի կազմել են 2839.0 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 83.0 տոկոս: Նախորդ տարվա համեմատությամբ աճել է 2023.8 հազար դրամով:
- Ֆոնդային բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդը կազմում է 465.1 հազար դրամ:

### 3. Վարչական բյուջեի ծախսեր

Վարչական բյուջեի ծախսերը 3 ամսվա համար նախատեսված 548060.0 հազար դրամի դիմաց կատարվել են 493890.0 հազար դրամով կամ կատարողականը կազմել է 90.1 տոկոս:

Ըստ գործառնական դասակարգման և ծրագրերի ծախսերը կատարվել են հետևյալ կերպ.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ	97,3%
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	100%
ՀԱՄԱՐԱԿԱՆ ԿԱՐԳ, ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ և ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ	0,0%
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	100%
ՇՐՋԱԿԱՍ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	89,7%
ԲՆԱԿ. ՇԻՆԱՐԱՐ. ԵՎ ԿՈՍՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ	97,2%
ՀԱՆԳԻՍ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ	83,1%
ԿՐԹՈՒԹՅՈՒՆ	87,2%
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	83,8%

### 4. Ֆոնդային բյուջեի ծախսեր

Ֆոնդային բյուջեով 3 ամսվա համար նախատեսվել են 14090.0 հազար դրամի ծախսեր, դրամարկղային ծախսը կազմել է 14089.9 հազար դրամ կամ կատարվել է 100 տոկոսով:

Առ 01.04.15թվականի դրությամբ բյուջեի պարտքը կազմում է 50761.8 հազար դրամ, որից

- աշխատավարձի գծով պարտք չկա:
- ՀՈԱԿ-ների սուբսիդավորման գծով՝ 38052.2 հազար դրամ:
- քաղաքային տնտեսության և այլ ծախսերի գծով՝ 12709.6 հազար դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ԴԱՐԲԻՆՅԱՆ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲԱԺԵՆԻ ՊԵՏ՝

Ա. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

**ՀԱՂՈՐԴՈՒՄ**  
**ՎԱՍԱԶՈՐԻ ՀԱՍՏԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ**  
 (01.01.2015թ. - 31.03.2015թ. ժամանակահատվածի համար)  
**1.ԵԿԱՍՏՈՒՏՆԵՐ**  
**Վարչական բյուջե**

Տն-դի NN	Եկամտատեսակները	Հոդ- վածի NN	Տարեկան հաստատ- ված պլան	Կատ. փոփոխ. (ավելա- ցումը /+/, պակա- նեցումը /-/ /)	Տարեկան ճշտված պլան	Հաշվետու ժամանակաշրջան 1-ին եռամսյակ			
						պլան	Փաստացի	Կատ. % պլ- անի նկ.	
								7	8
1	2	3	4	5	6	7	8	9	10
1000	ԸՆԴԱՍԵՆԸ ԵԿԱՍՏՈՒՏՆԵՐ (տող 1100 + տող 1200+տող 1300)		2195083,5		2195083,5	548060,0	486770,2	88,8	22,2
	այդ թվում՝								
1100	1. ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ (տող 1110 + տող 1120 + տող 1130 + տող 1150 + տող 1160)	7100	415583,0		415583,0	103950,0	111605,8	107,4	26,9
	այդ թվում՝								
1110	1.1 Գույքային հարկեր անշարժ գույքից	7131	147700,0		147700,0	36925,0	28228,8	76,4	19,1
	այդ թվում՝								
1111	Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար		110000,0		110000,0	27500,0	21354,0	77,7	19,4
1112	Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար		37700,0		37700,0	9425,0	6874,8	72,9	18,2
1120	1.2 Գույքային հարկեր այլ գույքից	7136	180000,0		180000,0	45000,0	61040,9	135,6	33,9
	այդ թվում՝								
1121	Գույքահարկ փոխադրամիջոցների համար		180000,0		180000,0	45000,0	61040,9	135,6	33,9
1130	1.3 Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ	7145	62883,0		62883,0	15775,0	17230,3	109,2	27,4
	այդ թվում՝								
1131	Տեղական տուրքեր (տող 1132 + տող 1135 + տող 1136 + տող 1137 + տող 1138 + տող 1139 + տող 1140 + տող 1141 + տող 1142 + տող 1143 + տող 1144+տող 1145+ տող 1146+տող 1147)		62883,0		62883,0	15775,0	17230,3	109,2	27,4
	այդ թվում՝								



